Պատմության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքին, լավ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև սկսեք աշխատանքը:

Թեստի առավելագույն միավորն է՝ 55:

Թեստի աշխատանքի համար տրամադրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն

Հրահանգ №1-22 առաջադրանքների համար: Յուրաքանչյուր հարցին կից տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ձեր կողմից ընտրած պատասխանը նշելու միակ ճանապարհը պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում X նշան դնելն է: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, ուր դրել եք X նշանը, ապա նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) 1. Ո՞ր դատողությունն է ճիշտ նկարում պատկերված արտեֆակտի մասին:

ա) Վանում հայտնաբերված գավաթը վկայում է, որ գինեգործությունը տեղական տնտեսության մեջ առաջատար տեղ է զբաղեցրել:

բ) Թրիալեթիի դամբարանաբլուրներից մեկում հայտնաբերված արծաթե թասը պաշտամունքային ծեսերն ու սովորույթներն ուսումնասիրելու հնարավորություն է ընձեռում:

գ) Փասիսի գանձի մասը կազմող եգիպտական սպասքը վկայում է զարգացած առևտրային հարաբերությունների մասին:

դ) Ախալգորիում հայտնաբերված ամանեղենը վկայում է հասարակության մեջ ձևավորված սոցիալական հավասարության մասին:

(1) 2. Հին Արևելքի ո՞ր պետության մայրաքաղաքն էր Նինվեն:

ա) Ասորեստանի,

բ) Շումերական պետության,

գ) Մարաստանի,

դ) Խեթական պետության:

(1) 3. Հույների կողմից ո՞ր ճակատամարտում տարած հաղթանակի հետ է կապված ժամանակակից օլիմպիական խաղերի մարզաձևերից մեկի անվանումը:

ա) Պլատեայի,

բ) Մարաթոնի,

գ) Քերոնեայի,

դ) Թերմոպիլեի:

(1) **4. Թվարկածներից ո՞րն է կապված Գայոս Մարիոսի գործունեության հետ։**

ա) Բարբարոսների առաջնորդներին քաղաքացիության շնորհումը, ինչը նպաստեց գերմանական ցեղերի հետ հաշտեցմանը,

բ) ռազմական բարեփոխումների իրականացումը, որն էլ ավելի հզորացրեց Հռոմեական պետության ռազմական ներուժը,

գ) ստրուկներին փոքր հողատարածքների բաժանումը, որից հետո Հռոմում արագորեն աճեց հացահատիկային մշակաբույսերի արտադրությունը,

դ) Սենատի իրավունքների ընդլայնումը, ինչի արդյունքում հնարավոր դարձավ արագ դադարեցնել քաղաքացիական պատերազմը։

(1) **5. «Ինքնակալ Կեսար Վեսպասիանոսը ... Միհրդատ թագավորի, Փարսման թագավորի որդու, բարեկամ Կեսարի և ... ժողովրդի համար ամրացրեց պատերը»: Ո՞ր պետությունների միջև փոխհարաբերությունների մասին է տեղեկություններ հաղորդում աղբյուրից մեջբերված տվյալ հատվածը:**

ա) Լազական թագավորության և Հռոմեական կայսրության,

բ) Իբերիայի և Բյուզանդիայի,

գ) Բյուզանդիայի և Լազական թագավորության,

դ) Հռոմեական կայսրության և Իբերիայի:

(1) **6. Ո՞ր տեղեկությունն է ճիշտ Կատալաունյան (Ժողովուրդների) ճակատամարտի մասին:**

ա) Արևելյան Հռոմեական կայսրության և Ֆրանկական թագավորության զորքերի առճակատումն ավարտվեց վերջիններիս հաղթանակով:

բ) Հռոմեական կայսրության և Սասանյան Իրանի միջև տեղի ունեցած այս ճակատամարտում վճռորոշ դեր խաղաց Շահ Կավադի մահը:

գ) Արևմտյան Հռոմեական կայսրության և նրա դաշնակիցների զորքերը հետ մղեցին հոներին, որոնք կռվում էին Աթիլայի հրամանատարությամբ:

դ) Հռոմի վրա իրականացված հարձակման պատճառով կայսերական զորքերը հետապնդեցին վանդալների զորքերին, սակայն այս ճակատամարտում պարտվեցին:

(1) **7. Ո՞ւմ մասին է պատմում Պրոկոպիոս Կեսարացին իր «Գաղտնի պատմություն» ստեղծագործության մեջ:**

ա) Հուստինիանոս I Մեծի,

բ) Բարսեղ II Բուլղարասպանի,

գ) Ալեքսիոս I Կոմնենոսի,

դ) Կոստանդիանոս X Դուկայի:

(1) **8. Մուհամմադի հետ կապված ո՞ր պատմական իրադարձությունն է համարվում մուսուլմանական թվականության՝ Հիջրայի սկիզբը:**

ա) Ղուրանի ստեղծումը,

բ) իսլամ քարոզելու մեկնարկը,

գ) վերաբնակեցումը Մեքքայից Մադինա,

դ) Խալիֆի կոչում ստանալը:

(1) 9. Միացյալ Վրաստանի ո՞ր թագավորի մասին է գրում մատենագիրը. «Մեծ և անհասանելի նախախնամությամբ օրհնեց Քութայիսիի վանքը ... Մեծն արքա Վախթանգ Գորգասալիից հետո չի եղել նրա նման վեհ, զորեղ, բանական, եկեղեցիներ կառուցող, աղքատների նկատմամբ գթասիրտ և բոլորի հանդեպ արդար վերաբերմունք ցուցաբերող»:

ա) Ալեքսանդրե I-ի,

բ) Բագրատ III-ի,

գ) Գիորգի III-ի,

դ) Դեմետրե I-ի:

(1) **10. Ո՞ր տեղեկությունն է *սխալ* Անգլիայի թագավոր Հենրի II-ի մասին:**

ա) Նա առաջին թագավորն էր Պլանտագենետների դինաստիայից,

բ) կրում էր Նորմանդիայի հերցոգի (դուքս) տիտղոսը,

գ) սպանել տվեց Քենթերբերիի արքեպիսկոպոսին,

դ) սկսել է Հարյուրամյա պատերազմն Անգլիայի և Ֆրանսիայի միջև:

(1) **11. Ո՞ր քաղաքի նվաճմամբ ավարտվեց Ռեկոնկիստան:**

ա) Վալենսիայի,

բ) Գրանադայի,

գ) Սևիլյայի,

դ) Սարագոսայի:

(1) **12. Ո՞ր դատողությունն է ճիշտ Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Կառլոս V-ի մասին:**

ա) Գերմանիայի բողոքական իշխանների հետ երկարատև առճակատումից հետո կնքեց Աուգսբուրգի կրոնական հաշտության համաձայնագիրը:

բ) Պավիայի ճակատամարտում պարտվելուց և գերի ընկնելուց հետո նա ստիպված էր զիջել Միլանի Դքսությունը Ֆրանսիային:

գ) Ձևավորեց «Սրբազան լիգա», որը վճռական հաղթանակ տարավ օսմանցիների նկատմամբ Լեպանտոյի ծովամարտում:

դ) Հռոմի պապի միջնորդությամբ Պորտուգալիայի թագավորի հետ ստորագրեց Տորդեսիլյասի պայմանագիրը՝ նոր հայտնաբերված հողերը բաժանելու համար:

(1) **13. Ո՞ր քաղաքն է փորձել գրավել Սուլթան Սուլեյման I-ը XVI դարում:**

ա) Կրակովը,

բ) Պրահան,

գ) Վիեննան,

դ) Մյունխենն.

(1) **14. Ո՞ր տեղեկությունն է ճիշտ XVI դարի Վրաստանի պատմության մասին։**

ա) Մուրջախեթիի ճակատամարտում տարած հաղթանակից հետո Իմերեթիի թագավոր Բագրատ III-ը իր տարածքին միավորեց Սամցխե-Սաաթաբագոյի մեծ մասը։

բ) Գարիսի ճակատամարտում ղզլբաշներին պարտության մատնելուց հետո Քարթլիի թագավոր Լուարսաբ I-ը գրավեց Թբիլիսիի բերդը։

գ) Կախաբեր Ղորղանաշվիլիի դավաճանության հետևանքով Սիմոն II-ը պարտություն կրեց Սոխոյստայի ճակատամարտում և գերեվարվեց օսմանցիների կողմից։

դ) Չըլդըրի ճակատամարտում տարած հաղթանակից հետո ղզլբաշներն ամբողջությամբ գրավեցին Մեսխեթին և հիմնեցին Ախալցիխեի խանությունը։

(1) **15. Ո՞ր դատողությունն է ճիշտ Ռոստոմի (Խոսրո-Միրզայի) գործունեության մասին:**

ա) Շահից Կուլարաղասի տիտղոսը ստանալուց հետո նշանակվեց Քարթլի-Կախեթիի կառավարիչ և բռնի ուժով տարածում էր իսլամը:

բ) Թագավոր օծվելու համար նա ընդունեց մահմեդականություն և իրեն հռչակեց օսմանցիների վասալ, թեև գաղտնիորեն դեսպաններ էր ուղարկում նաև Մոսկվայի Մեծ իշխանի մոտ:

գ) Քարթլի-Կախեթիի փաշա նշանակվելուց հետո նա լավ հարաբերություններ հաստատեց տեղի ֆեոդալների հետ և թագավորության համար ձեռք բերեց խաղաղություն:

դ) Որպես Քարթլիի Վալի (տիտղոս) նա Իրանի հպատակն էր, սակայն միևնույն ժամանակ խաղաղություն էր պահպանում Քարթլիում, ինչը նպաստում էր երկրի տնտեսական զարգացմանը:

(1) **16. Ո՞ր դատողությունն է ճիշտ XVII դարում Եվրոպայում ընթացող Երեսնամյա պատերազմի հետևանքների մասին:**

ա) Հին դինաստիան դադարեց գոյություն ունենալուց, ինչից ելնելով անժառանգ մնացած Իտալիայի գահը զբաղեցրեցին Բուրբոնների տոհմի ներկայացուցիչները:

բ) Շտաուֆենները պահպանեցին Սրբազան Հռոմեական կայսրության կայսրի տիտղոսը, սակայն ստիպված էին զիջել Սիլեզիայի տարածաշրջանը Պրուսիայի թագավորությանը:

գ) Շվեդիան կարևոր տարածքներ ձեռք բերեց հյուսիսային Գերմանիայում և ամրապնդեց իր դիրքերը Եվրոպայում:

դ) Սրբազան Հռոմեական կայսրության ողջ տարածքում կաթոլիկությունը հռչակվեց որպես միակ թույլատրված դավանանք:

(1) 17. Ո՞ր տեղեկությունն է ճիշտ XVIII դարի Վրաստանի մշակութային կյանքի մասին։

ա) Էրեկլե II-ի նախաձեռնությամբ Թբիլիսիի տպարանը վերսկսեց աշխատանքը,

բ) Անտոն Ա կաթողիկոսի ջանքերով Թելավիում մեկնարկեց անմսագրի հրատարակումը,

գ) Սողոմոն I-ի հրամանով Քութաիսիում բացվեց հոգևոր ճեմարան,

դ) Դարեջան թագուհու աջակցությամբ Գորիում հիմնադրվեց կանանց գիմնազիա։

(1) **18. Էրեկլե II-ի թագավորության շրջանում Վրաստանի ռազմական պատմության մասին ո՞ր տեղեկությունն է *սխալ*:**

ա) Էրեկլե II-ը թշնամիների դեմ պայքարելու համար վարձում էր Հյուսիսային Կովկասի ժողովուրդներին, այդ թվում՝ չերքեզներին:

բ) Թագավորի բանակն ուներ թնդանոթների մեծ պաշար, որոնք ձուլվում էին Վրաստանում:

գ) Ձևավորվեց «Մորիգե» զորքը, որը տարիներ շարունակ ղեկավարում էր Լևան Բատոնիշվիլին:

դ) Էրեկլե II-ի ջանքերով և արտերկրից հրավիրված սպաների օգնությամբ բացվեց Թբիլիսիի ռազմական ուսումնարանը:

(1) **19. Ի թիվս այլ իրադարձությունների, ի՞նչն էր մատնանշում XIX դարի կեսերին Ռուսաստանի Կայսրության ճգնաժամի մասին:**

ա) Պուգաչովի ապստամբությունը,

բ) Ստոլիպինի անհաջող բարեփոխումները,

գ) պարտությունը Ղրիմի պատերազմում,

դ) կայսեր հրաժարականը:

(1) **20. Ֆրանսիայի պատմության ո՞ր ժամանակաշրջանին է պատկանում այսպես կոչված Դրեյֆուսի գործը:**

ա) առաջին կայսրության,

բ) երկրորդ հանրապետության,

գ) երկրորդ կայսրության,

դ) երրորդ հանրապետության:

(1) **21. Ո՞ր դատողությունն է ճիշտ 1919 թվականի փետրվարին Վրաստանում կայացած Հիմնադիր ժողովի ընտրությունների արդյունքների վերաբերյալ:**

ա) Ոչ մի կուսակցություն չկարողացավ ձեռք բերել մեծամասնություն, և ստեղծվեց Սոցիալիստ-ֆեդերալիստների գլխավորած կոալիցիան, մինչդեռ ընդդիմության մեջ հայտնվեց Ժողովրդական-դեմոկրատական կուսակցությունը:

բ) Հաղթանակ տարավ Աշխատավորների միացյալ կուսակցությունը և նախագահ նշանակվեց նրանց ներկայացուցիչը, սակայն նախարարների կաբինետը կոալիցիոն էր:

գ) Մեծամասնություն ձեռք բերեց Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը և ձևավորվեց միակուսակցական նախարարների կաբինետ, իսկ Ազգային-դեմոկրատական և Սոցիալիստ-ֆեդերալիստական կուսակցությունները ընդդիմադիր կուսակցություններ էին:

դ) Զախակողմյան կուսակցությունները համոզիչ հաղթանակ տարան և ձեռք բերեցին մեծամասնություն, սակայն Վրաստանի Կոմունիստական կուսակցությունը հրաժարվեց աշխատել Հիմնադիր ժողովում:

(1) **22. Ո՞ր բնութագիրն է ճիշտ ԽՍՀՄ-ում գոյություն ունեցող կառավարման համակարգի մասին։**

ա) Ավտորիտար վարչակարգ, երբ օրենսդրությամբ իշխանությունը պատկանում էր մեկ անձի, և նա ինքն էր նշանակում իր իրավահաջորդին, որին փոխանցում էր ամբողջ իշխանությունը:

բ) Ռազմական դիկտատուրա, որը քողարկված էր աշխատավոր զանգվածների, մասնավորապես բանվորների ու գյուղացիների իբրև թե համընդհանուր իշխանությամբ:

գ) Տոտալիտար վարչակարգ, երբ ողջ իշխանությունը կենտրոնացած էր միակ քաղաքական կուսակցության էլիտայի ձեռքում:

դ) Դասակարգային դիկտատուրա, երբ քաղաքական իրավունքները պաշտոնապես շնորհվում էին պետության միայն ամենաբազմաքանակ գյուղացիական դասին։

Հրահանգ № 23-26 առաջադրանքների համար

Ժամանակագրական առումով դասավորեք պատմական իրադարձությունները: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա հատկացված վանդակներում: Նկատի ունեցեք, որ վանդակում գրվում է միայն նշված իրադարձության համապատասխան թվանշանը: Առաջին վանդակում գրվում է այն թվանշանը, որով նշված է բոլորից վաղ տեղի ունեցած իրադարձությունը և այլն, հետևաբար, վերջին երրորդ վանդակում կգրվի այն թվանշանը, որով նշված է բոլորից ուշ տեղի ունեցած իրադարձությունը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **23. Ժամանակագրական առումով դասավորեք Աքեմենյան Իրանի պատմության հետ կապված իրադարձությունները:**

1. Պարտությունը Սալամինի ծոցում
2. Լիդիայի թագավորությանը պարտության մատնելը
3. Գավգամելայի ճակատամարտ

(1) **24. Ժամանակագրական առումով դասավորեք Հռոմեական կայսրությունում զարգացող իրադարձությունները:**

1. Մայրաքաղաքի տեղափոխումը Կոստանդնուպոլիս
2. Հռոմեացիների պարտությունը Ադրիանապոլսի ճակատամարտում
3. Հռոմի գրավումը Ալարիկի կողմից

(1) **25. Ժամանակագրական առումով դասավորեք Ֆրանսիայում XVII դարում զարգացող իրադարձությունները:**

1. Ֆրոնդա
2. Մարիա Մեդիչիի ռեգենտությունը
3. Լա Ռոշելի գրավումը

(1) **26. Ժամանակագրական առումով դասավորեք վրաց պատմաբաններին՝ ըստ նրանց գործունեության ժամանակի:**

1. Փարսադան Գորգիջանիձե
2. Վախուշտի Բատոնիշվիլի
3. Պլատոն Իոսելիանի

Հրահանգ № 27 առաջադրանքի համար:

Աշակերտն ունի քարտեզ: Սեփական գիտելիքների և քարտեզի վրա առկա տեղեկատվության միջոցով նա պետք է պատասխաներ տրված հարցերին:

Աշակերտի տրված պատասխաններից չորսը (4) սխալ է:

Դուք պետք է գտնեք բոլոր չորս սխալներն, արտագրեք դրանք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում և նույն տեղում ավելացնեք ճիշտ պատասխանները: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 4:

Առաջադրանք 27. Քարտեզն ու հարցերը տե՛ս հաջորդ էջերում



հարցերը տե՛ս հաջորդ էջում

Աշակերտին ուղղած հարցերը.	Աշակերտի տված պատասխանները.
27.1. Ո՞ր դարի իրավիճակն է պատկերված քարտեզի վրա:	27.1. Առաջին դարի
27.2. Քարտեզի համաձայն, ո՞ր քաղաքներն էին գտնվում Սևծովյան ափին հռոմեացիների կողմից նորանվաճ տարածքում:	27.2. Թիրան, Օլբիան
27.3. Քարտեզի համաձայն, ո՞ր թագավորությունների տարածքներում են իրականացրել արշավանքներ հռոմեացիներն Ասիայում:	27.3. Հայաստանի, Սելևկիդների
27.4. Քարտեզի համաձայն, ո՞ւմ դեմ էին պատերազմում հռոմեացիները Եվրոպայում, և վերջնականապես ինչո՞ւմ արտահայտվեց նրանց հաղթանակն այս պատերազմում:	27.4. Դակիայի թագավորության, ամբողջությամբ միավորեցին կայսրության տարածքին:
27.5. Քարտեզի համաձայն, ովքե՞ր էին վտանգ ներկայացնում Հռոմեական կայսրության համար Գալիայի սահմանի մոտ և ինչպե՞ս վարվեցին հռոմեացիները նրանցից պաշտպանվելու համար:	27.5. Գերմանական ցեղերը, կառուցեցին քաղաք Լուտեցիան:
27.6. Քարտեզի համաձայն, ո՞ր քաղաքի պաշարումն ավարտվեց հռոմեացիների համար ձախողմամբ: Ձեր կարծիքը հիմնավորեք միայն քարտեզի վրա տրված տեղեկությունների հիման վրա:	27.6. Հաթրայի, քաղաքի վրա չի երևում այն գրավելու նշանը:

Հրահանգ № 28 առաջադրանքի համար:
Ուշադիր վերլուծե՛ք նկարում տրված տեղեկատվությունը և պատասխանե՛ք տրված հարցերին: Հաշվի առեք, որ բոլոր երեք նկարներում պատկերված է մեկ պատմական գործընթացի երեք դրվագ: Պատասխանները գրառե՛ք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 7:

Առաջադրանք 28. Նկարներն ու հարցերը տե՛ս հաջորդ էջերում

N1

N2

N3

Նկարներում պատկերված են XIX դարի II կեսին Եվրոպայում տեղի ունեցած պատմական գործընթացը պատկերող տարբեր փուլեր: **հարցերը տե՛ս հաջորդ էջում**

Հարցեր.

(2) 28.1. Ո՞ր պետության նախաձեռնությամբ մեկնարկած քաղաքական գործընթացն է պատկերված N1 նկարում: Ձեր պատասխանը հիմնավորեք համաձայն նկարի:

(2) 28.2. Նշեք այն պետությունը, որի ստեղծման հայտարարությունն է պատկերված N2 նկարում և որտե՞ղ է տեղի ունեցել այդ պատմական իրադարձությունը:

(2) 28.3. Անվանեք N3 նկարի գլխավոր գաղափարը: Ձեր տեսակետը հիմնավորեք համաձայն նկարի:

(1) 28.4. Նշե՛ք այն դասի թեմայի վերնագիրը, որի ընթացքում կօգտագործեիք բոլոր երեք նկարները:

Հրահանգ № 29 առաջադրանքի համար:

Ուշադիր ընթերցե՛ք ստորև բերված պատմական փաստաթուղթը, ըմբռնե՛ք տեքստը և պատասխանե՛ք հարցերին: Պատասխանները գրառե՛ք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 18:

Առաջադրանք 29. Պատմական փաստաթուղթն ու հարցերը տե՛ս հաջորդ էջերում

1939 թվականին ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև կնքված պայմանագիր

ԽՍՀՄ-ի կառավարությունը և Գերմանիայի կառավարությունն առաջնորդվելով ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև խաղաղությունն ամրապնդելու ցանկությամբ և հիմնվելով ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև 1926 թվականին կնքված չեզոքության մասին պայմանագրի վրա, եկան հետևյալ համաձայնության՝

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են զերծ մնալ միմյանց դեմ ցանկացած բռնությունից, ագրեսիայից կամ հարձակումից, ինչպես առանձին-առանձին, այնպես էլ այլ պետությունների հետ համատեղ:

Անցնել հարցերին՝ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

Եթե Պայմանավորվող կողմերից մեկը հարձակման ենթարկվի որևէ երրորդ պետության կողմից, ապա մյուս Կողմը ոչ մի դեպքում որևէ կերպ չի աջակցի երրորդ պետությանը:

Պայմանավորվող կողմերի կառավարություններն ապագայում ևս կշարունակեն փոխհարաբերությունները միմյանց հետ խորհրդակցելու նպատակով՝ իրենց ընդհանուր շահերին առնչվող հարցերի շուրջ միմյանց տեղեկություններ տրամադրելու նպատակով:

Պայմանավորվող կողմերից ոչ մեկը չի կարող դառնալ որևէ միավորման անդամ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ուղղված է ստորագրող մյուս Կողմի դեմ:

Տեքստի շարունակությունը տե՛ս հաջորդ էջում

Պայմանավորվող կողմերի միջև այս կամ այն հարցի շուրջ վեճ կամ կոնֆլիկտ առաջանալու դեպքում երկու Կողմերը վեճն ու կոնֆլիկտը լուծում են խաղաղ ճանապարհով, կարծիքների փոխանակմամբ կամ, անհրաժեշտության դեպքում, կոնֆլիկտը լուծելու նպատակով հանձնաժողով ձևավորելով:

Սույն Պայմանագիրը կնքվում է տասը տարի ժամկետով, և եթե ժամկետը լրանալուց մեկ տարի առաջ Պայմանավորվող կողմերից որևէ մեկը չի հայտնում պայմանագիրը լուծարելու մասին, ապա այն ավտոմատ կերպով երկարաձգվում է ևս հինգ տարով:

Սույն Պայմանագիրը հնարավորինս կարճ ժամկետում ենթակա է վավերացման: Վավերագրերի փոխանակումը պետք է տեղի ունենա Բեռլինում: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Սույն Պայմանագիրը կազմված է գերմաներեն և ռուսերեն լեզուներով, երկու բնագիր օրինակներից, Մոսկվայում 1939 թվականի օգոստոսի 23-ին:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Գերմանիայի միջև Չհարձակման պայմանագիրը ստորագրելիս, երկու Կողմերի իրավասու ներկայացուցիչները խիստ գաղտնի պայմաններում քննարկեցին Արևելյան Եվրոպայում իրենց ազդեցության ոլորտների սահմանազատման հարցը: Այդ քննարկման արդյունքում բացահայտեց հետևյալը՝

Տեքստի շարունակությունը տե՛ս հաջորդ էջում

Անցնել հարցերին՝ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

Բալթյան երկրների (Ֆինլանդիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվա) կազմում ներառված մարզերի տարածքային և քաղաքական վերաբաշխման դեպքում Լիտվայի հյուսիսային սահմանը կհանդիսանա Գերմանիայի և ԽՍՀՄ-ի ազդեցության ոլորտների բաշխման սահմանագիծը:

Լեհաստանի պետության կազմում ներառված մարզերի տարածքային և քաղաքական վերաբաշխման դեպքում Գերմանիայի և ԽՍՀՄ-ի ազդեցության ոլորտները կսահմանազատվեն մոտավորապես Նարև, Վիսլա և Սան գետերի երկայնքով: Հարցն առ այն, թե ներկայացնո՞ւմ է արդյոք փոխադարձ շահ Լեհաստանի պետության անկախության պահպանումը և ինչպիսի՞ն կլինեն այդ պետության սահմանները, վերջնականապես կորոշվի քաղաքական իրադարձությունների հետագա զարգացումներով:

Ցանկացած դեպքում երկու պետություններն այդ հարցը կլուծեն փոխադարձ համաձայնության ճանապարհով:

Ինչ վերաբերում է Հարավարևելյան Եվրոպային, ապա Խորհրդային կողմն ընդգծել է իր շահագրգռվածությունը Բեսարաբիայի նկատմամբ: Գերմանական կողմը հստակ հայտարարել է, որ քաղաքականապես շահագրգռված չէ այդ տարածքներով:

Սույն արձանագրությունը երկու Կողմերը դիտարկում են որպես խիստ գաղտնի:

Մոսկվա, 23 օգոստոսի 1939 թվական:

հարցերը տե՛ս հաջորդ էջերում

Անցնել հարցերին՝ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

Հարցեր.

(1) **29.1.** Ըստ Ձեզ՝ ո՞ր քաղաքական իրավիճակն էր պայմանավորում այն, որ պայմանագիրը պետք է վավերացվեր հնարավորինս շտապ կարգով:

(1) **29.2.** Համաձայն փաստաթղթի, որքա՞ն կարող էր լինել ներկայացված պայմանագրի առավելագույն ժամկետը:

(1) **29.3.** Համաձայն փաստաթղթի, ի՞նչ սահմանափակում էր կիրառվում ստորագրող պետություններից որևէ մեկի նկատմամբ որևէ միավորմանն անդամակցելու դեպքում:

(1) **29.4.** Համաձայն փաստաթղթի, ի՞նչ էր նախատեսվում երրորդ պետության կողմից որևէ ստորագրող պետության վրա հարձակվելու դեպքում:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-ին էջին

(1) **29.5.** Համաձայն փաստաթղթի, նշեք այն կոնկրետ մարզը, որի նկատմամբ Գերմանիան չուներ որևէ շահագրգռվածություն:

(1) **29.6.** Համաձայն փաստաթղթի, ամբողջությամբ թվարկեք, թե ինչպես պետք է լուծեին ստորագրող պետություններն իրենց միջև ծագած կոնֆլիկտները կամ վեճերը:

(2) **29.7.** Փաստաթղթում նշված Բալթյան երկրներից բացի, ամբողջությամբ թվարկեք այն պետությունները, որոնց տարածքներով շահագրգռված էին ստորագրող պետությունները:

(2) **29.8.** Ո՞ր քաղաքի հետ է կապված անվանումը, որով հիշատակվում է 1918-1933 թվականներին գոյություն ունեցող Գերմանիայի պետությունը և ինչո՞ւ:

(2) **29.9.** Պատմության մեջ ևս ի՞նչ անվամբ է հայտնի ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև կնքված Չհարձակման այս պայմանագիր և ինչո՞ւ է այդպես կոչվում:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-ին էջին

(2) **29.10.** Ըստ ձեզ, ո՞ր երրորդ պետությունը կարող էր հարձակվել Գերմանիայի վրա և ինչո՞ւ:

(2) **29.11.** Փաստաթղթում հիշատակված ո՞ր պետությանն էր սպառնում անկախության փաստացի և իրավական կորուստ, և փաստաթղթում ներկայացված ո՞ր տեղեկությունն է հաստատում Ձեր տեսակետը:

(2) **29.12.** Պայմանագրով սահմանված ազդեցության ոլորտներն իրականում այլ կերպ են վերաբաշխվել: Փաստաթղթում նշված պետություններից մեկը չի հայտնվել այն պետության ազդեցության տակ, որտեղ այն պետք է լիներ պայմանագրի համաձայն: Անվանե՛ք այդ պետությունը և ո՞ր պետության ազդեցության ոլորտում հայտնվեց այն իրականում:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-ին էջին